ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

***Արձանագրություն N 3***
***«ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/16-1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի***

ք. Գյումրի

29 դեկտեմբերի 2017թ., ժ 16:00

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝*** ***Կարեն Հմայակյան***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի պատասխանատու-ԳՊ/ԳԱՊ*

***Անդամներ՝***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ-ԳՊ/ԳԱ* ***Սիրուշ Պողոսյան***

***Լիլիթ Հովհաննիսյան***

*Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ-ԳՊ/ԲԱ* ***Անահիտ Մելքոնյան***

***Կարեն Ասատրյան***

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ***Նվարդ Բադալյան***

*Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող-ԳՊ/ՄՀ*

1. ***Ընդունել ի գիտություն***

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 43-րդ կետի 3 և 4 ենթակետերի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 25.12.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:
Գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. թիվ 2 որոշմամբ էլեկտրոնային փոստի միջոցով նիստին հաջորդող աշխատանքային օրը առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի "զ" պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը/հավելված 6 և 6.1/ /կցվում է/:

2. ***Հանձնաժողովն արձանագրեց***

Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:
Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:
Ներկայացված փաստաթղթերը գնահատման թերթիկի հետ միասին հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվել են հանձնաժողովի անդամներին գնահատելու համար:

*3. Հանձնաժողովը որոշեց*
*Հիմք ընդունելով վերոգրյալը՝*

թիվ 8 չափաբաժինների մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ –ին

թիվ 18, 52 չափաբաժինների մասով՝ <<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ –ին

թիվ 24, 46 չափաբաժինների մասով՝ <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ –ին

թիվ 12, 20, 34, 40, 50, 64 չափաբաժինների մասով՝ <<Թագ Հէմ>> ՍՊԸ –ին

թիվ22, 29, 36, 53, 70 չափաբաժինների մասով՝ <<Լեյկոալեքս>> ՍՊԸ –ին

թիվ 27, 44, 54, չափաբաժինների մասով՝ <<Մեդիտեք>> ՍՊԸ –ին

թիվ 19, 33 չափաբաժինների մասով՝ <<Էսզեթ Ֆարմա>> ՍՊԸ –ին

թիվ 1, 3, 4, 7, 37, 45, 47, 49, 56, 58, 60, 61, 66 չափաբաժինների մասով՝ <<Լևոն և Լամարա>> Դեղատուն ՍՊԸ –ին

թիվ 2, 9, 13, 17, 23, 25, 26, 28, 30, 31, 32, 38, 41-43, 55,57, 59, 63, 65, 68, 69 չափաբաժինների մասով՝ << Նատալի Ֆարմ >> ՍՊԸ–ին

թիվ 15, 16, 48, 62 չափաբաժինների մասով՝ <<Դելտա>> ՍՊԸ–ին

թիվ 21, 35 չափաբաժինների մասով՝ <<Երմեդ>> ՍՊԸ –ին

Թիվ 5, 6, 10, 11, 14, 39, 51, 67 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, հետևաբար Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն այն համարվում է չկայացած:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

*3.1* Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

*3.2* Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00ին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

| | |
|---|---|
| Հանձնաժողովի ՝<br>Նախագահ՝ | Կարեն Հմայակյան |
| Անդամներ՝ | Սիրուշ Պողոսյան |
| | Լիլիթ Հովհաննիսյան |
| | Անահիտ Մելքոնյան |
| | Կարեն Ասատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Նվարդ Բադալյան |